ԱՅԼԵՎՍ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ՀԱՄԲԵՐԵԼ, ԱՌԱՎԵԼ ԵՎՍ՝ ՀԱՆԴՈՒՐԺԵԼ

Երևանի քաղաքապետը պարոն Սուրեն Աբրահամյանն էր, քաղաքի գլխավոր ճարտարապետը՝ Համլետ Խաչատրյանը: Անձամբ քաղաքապետին գրեցի մոտավորապես այսպես՝ «Ձեր օրոք, գլխավոր ճարտարապետի թողտվության պայմաններում, Զեյթուն թաղամասի ճարտարապետների աչքի առաջ, Ազատության պողոտան այլանդակվում է տարբեր կցակառույցներով: Խնդրում եմ, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն պողոտայի ճարտարապետական դեմքը աղտոտվելուց փրկելու համար»: Ես դիմում էի, որպես այդ պողոտայի սկզբնամասի համալիրի հեղինակ: Պարոն Աբրահամյանը չէր զլացել, իմ դիմումը կրկնօրինակված ուղարկել էր հիշյալ ճարտարապետներին, նրանք էլ մեկ անգամ զանգեցին և մեղքը իրենցից հեռացնելու նպատակով ասացին, թե «Ձեր դիմումը ստացել ենք, մեզ լսող չկա»: Այսքանով էլ ավարտվեց «միջոցների ձեռնարկումը» Ազատության պողոտան այլանդակվելուց փրկելու ուղղությամբ:

Քաղաքապետը փոխվեց, գլխավոր ճարտարապետը փոխվեց, իրերի դրությունը շարունակվեց մնալ նույնը: Պարզվում է, որ որոշում է կայացվել, որ որոշ խնդիրներ լուծվելու են տեղերում՝ թաղապետներն ու իրենց ճարտարապետները, իսկ այս վերջիններս, ինչպես սպասվում էր, ավելի ազատ, ավելի համարձակ են լուծում «քաղաքաշինական» հարցերը և, որ ակներև է, ավելի անպատասխանատու վարքագիծ են դրսևորում իրենց արարքներում: Ահա թե ինչու հարց է առաջանում, թե ինչու՞ գլխավորների փոխվելու հետ չեն փոխվում նաև որոշ ենթականեր:

Ազատության պողոտայի ձախ կեսը (սկզբնամասից բարձրանալիս), որը կենտ համարի շենքերն են՝ թիվ 1-11¬ը, ենթակա է Նոր Արաբկիրի թաղապետարանին (ճարտարապետն է Տարոն Խուրշուդյանը), աջ կեսը՝ որտեղ զույգ թվով՝ թիվ 2-12 շենքերն են՝ Նոր Զեյթունի թաղապետարանին (ճարտարապետը Սուրեն Ղազարյանն է): Անցած մեկ-երկու տարիների ընթացքում այս պողոտայում տեղի են ունեցել անհանդուրժելի շատ գործողություններ, որոնց համար պետք է պատասխան տան հիշյալ թաղապետարաններն իրենց ճարտարապետներով: Ահավասիկ, թիվ 1 շենքի աջ վերջավորության վերևում հարկ է բարձրացվել, նույնպիսի հարկ է բարձրացվել նաև թիվ 3 շենքի սկզբնամասի վերևում: Եվ որովհետև այդ անօրինականությունները

չվերացվեցին, վերջերս թիվ 1 շենքի վերջավորության նորաստեղծ հարկը զգալի ընդարձակվել է։ Նույն տեղում, հարևանությամբ, մեկ ուրիշը նույնպես հարկ է ավելացրել ու չբավարարվելով այդքանով, շենքի այդ նույն մասում արթիկտուֆի սրբատաշ քարով երեսապատումը իրենց սահմաններում սպիտակ են ներկել։ Պողոտայի այս նույն թևում մի քանի մետրով երկարացվել է թիվ երեք շենքը դեպի դպրոցի բակը։

Շենքերի այդ նույն շարքում հարկեր են ստեղծվել նաև ճարտարապետական ձևավորման նպատակով առկա ծավալների վրա։

Նույնպիսի խախտումներ կան պողոտայի աջակողմյան շենքերում։ Ահավասիկ, թիվ 2 շենքի պողոտային նայող ճակատում ստեղծվել է պատշգամբ, փչացնելով ճակատի տեսքը։ Նույն շարքում, շենքերի մեծ մասում հարկեր են բարձրացվել վերոհիշյալ ճարտարապետական նշանակության ծավալների վրա։ Երկաթբետոնյա սյուներով և հեծաններով շենք է կցվել թիվ 10 շենքի վերին ծայրին։ Խորդանոցի ծավալուն մաս է կցվել թիվ 12 շենքի վերին ծայրին, մայթի զգալի լայնություններ են գրավել առևտրական տաղավարները և նախամուտքի ծածկերը։

Բոլորովին նոր մի տաղավար է տեղակայվել թիվ մեկ շենքի գլխավոր ճակատի առջևում։ Ճակատների ձևավորման տեսակետից կարևոր շքամուտքերի քիվերի վրա պատշգամբներ են տեղակայել։

Այսքանը շա՞տ չէ 400 մետր երկարության մի պողոտայի համար, որը մոտ անցյալում մաքուր ու անխառն էր անկարգ հավելումներից։

Ցավալին այն է, որ այս նույն վիճակում են մեր մայրաքաղաքի բոլոր թաղամասերն ու մանավանդ Կենտրոնը (ճարտարապետն է Արամ Ներսիսյանը)։ Հուշարձան շատ շինությունների վրա հարկեր են բարձրացել նույնիսկ Մաշտոցի պողոտայում և այլուր։ Այստեղ անթույլատրելի վիճակի են բերվել կանաչ տարածությունները, մորեխների պես հարձակում է տեղի ունենում թամանյանական շրջանաձև և մյուս պուրակների վրա, կառուցապատվում են կանաչին հատկացված տարածությունները։

Այս ի՞նչ վիճակ է։ Պարզ է մի բան. անհատ քաղաքացին առանց գրավոր, երբեմն էլ՝ բանավոր թույլտվություն չունենալու դեպքում մեծ գումարներ չէր ներդնի, չիմանալով, որ չեն քանդի։ Ովքե՞ր են նրանց թույլատրում՝ կամ պաշտոնավորները, կամ ճարտարապետները, ուրիշ ոչ ոք։ Այսինքն՝ նրանք, ում տնօրինությանն է

հանձնվել մեր քաղաքի դեմքը անաղարտ պահելու գործը։ Պարզ է, այս ասպարեզում մարդիկ շահագրգռություն են ցուցաբերում, փորձում են հարստանալ, իսկ եթե այս սխալ է, ապա անգործունեության են մատնվել, իրենց պարտականությունները չեն կատարում. ըստ երևույթին գործի տերերը չեն կարողանում քաղաքը փչացնողներին վնասազերծել նրանց ունեցած պաշտպանների շնորհիվ։

Քաղաքը այլանդակելը անկասկած հանցագործություն է, քրեական հանցագործություն, սակայն այդ հանցագործներին պատասխանատվության ենթարկող չկա։ Այդ դեպքում պետք է պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր թերանում են իրենց պարտականությունները անթերի կատարելու գործում։

Ես, որպես մեր մայրաքաղաքի բազմամյա բնակիչ, որպես ճարտարապետ ու քաղաքացի, առավել ևս, որպես պողոտայի նախագծող և հեղինակ իրավասու եմ համարում ինձ պահանջելու, որ անառարկելիորեն վերացվեն բոլոր անօրինական կցակառույցները, հավելումները և այլ ձևի կեղտոտումները։

Կարևոր է տեսնել, որ այդ հանցագործությունները կապված չեն կարիքի հետ։ Դրանք նոր հարստացածներն են, որ իրենց գումարները ներդնում են իրենց հասկացողության ձևով։ Կառուցելը խրախուսելի է, սակայն պետք է այդպիսիք իրագործվեն օրինակելիորեն, համապատասխան տեղում և կանոնավոր։

Միաժամանակ, այս անօրինականությունների անզուսպ հոսանքը կասեցնելու նպատակով անհրաժեշտ պիտի համարել դատական պատասխանատվության ենթարկել բոլոր մեղավորներին, իսկ նրանց կոնկրետ ճանաչելու գործում պիտի գործեն ներքին գործերի նախարարության, ինչպես և դատախազական մարմինները, որոնք իրենց պատասխանատվությունից հեռու են պահում։ Եվ քանի որ մեղք ունեն քաղաքապետարանն ու թաղապետարանները, ապա նրանց համապատասխան աշխատակիցները ևս պետք է կրեն իրենց բաժին պատիժը։

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Ճարտարապետության դոկտոր,
Հայաստանի վաստակավոր շինարար